

թիւն ունէր տեղւոյն եկեղեցին ու վանքը, իսկ ՔէՔր Կէննայի մէջ Խաչակիրներու շինած պազլիլիքան կանգուն մնացած է մինչև ԺԸ. դար: Այժմ հոն կան միայն երկու պարզ եկեղեցիներ (Bar. gd. էջ 398 - 401):

Ս. Եպիփանի յիշած առնորդները. — Յայտնի է թէ Յունուար Երն՝ Քրիստոսի Աստուածայայտնութեան տօնին առթիւ կը յիշատակուին Յայտնութիւնը, Մոգերուն երկրպագութիւնը, Մկրտութիւնը, ինչպէս արեւելքի եկեղեցիները՝ նոյնպէս Հայ եկեղեցին ալ անոնց կը միացնէ մեր Տիրոջ Կանայի մէջ Չուրը գինիի փոխելու հրաշքին յիշատակը, և այդ պատճառաւ է որ Ս. Ծննդեան տօնէն ութ օր յետոյ առաջին կիւրակէին եկեղեցւոյ մէջ կը կարգացուի Կանայի նոյն հրաշքին Աւետարանը (Յովհ. Բ. 1 - 11^(*)):

Երու մէջ. բայց 1789 ի Յեղափոխութեան արին կոտրուած ու ոչնչացած են (Mis. Գ. հաս. էջ 580):

(*) Հայ եկեղեցին ունեցած է շարական մը հարսանեաց վերաբերեալ, որուն տուներուն գլխազերք կը կապեն **Խաչատուր**, բայց վերջի ւ եւ **Ի** տուներ պակաս են. հաւանաբար Խաչատուր Տարօնցիին գրչէն ելած է այս շարականը: Անա անոր վերջին տունը. «Որ ի Կանայ Գալիլիացոց ի կղէուպանց խնջոյսն րնթացեալ եւ զքնութիւն ջուրցն ի գինի փոխեցեր, մաւր քս մաղթանաւ աւրհնեա զհարսանիս» (**Հին եւ նոր պարականոն շարականներ, Ս. Վ. Ա.** էջ 171 - 172):

Աւետարանի մէջ յիշուած չէ Կանայի հարսանեաց ժրոջ անունը, բայց հայկական այս աւանդութեան համաձայն՝ հարսանիքին Տէր եղած կ'ըլլայ **Կղէուպաս**, որ հայրն է փոքր Յակոբոս առաքեալին, որ կը կոչուի նաեւ **Ալփէոս**, որուն կիցն է Մարիամ՝ քոյր մօր Տեառն, եւ կը կոչուի Մարիամ Կղէուպայ (Յովհ. ԺԹ. 25): Շատեալ կտրմիքին համաձայն, այս Կղէուպասը մին էր այն երկուքէն որ Տիրոջը նանապարհորդակից եղան անոր յարութենէն վերջ՝ մինչ եմանուս կ'երթային (**Ղուկ. ԻԳ. 18**):